# Արձանագրություն N 18/15-3

**"ՔԵՆԴԼ-ԳՀԱՊՁԲ-18/15"** ծածկագրով ARMEPS համակարգի միջոցով իրականացվող գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ամփոփման նիստի

ք. Երևան 15 նոյեմբերի 2018թ. Ժամը 11:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ (ԳԱ+ԳԱՊ) | Մ. Գյուլումյան, |
| Գնահատող անդամներ (ԳԱ)՝ | Վլ. Դեխտյարով, |
| Բացող անդամներ (ԲԱ)՝ | Ա. Վարդանյան, Ա. Պետրոսյան, |
| Հանձնաժողովի քարտուղար (ՄՀմ)՝ | Ա. Բաղրամյան |

**1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին**

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը՝

1. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված Եզրակացության գնահատում:
2. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հաստատված, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի գնահատում:
3. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցի մասին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**2. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված Եզրակացության գնահատում**

2.1 ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված Եզրակացության համաձայն առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցները՝ «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ն և «Մաքս Օիլ» ՍՊԸ-ն, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չունեն ժամկետանց հարկային պարտավորություններ:

**3. Առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցների կողմից հաստատված, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի գնահատում**

3.1 Առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցները սահմանված կարգով և ժամկետում էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովին են ներկայացրել իրենց կողմից հաստատված, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հրավերի հավելված NN 6 և 6.1): Ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է Հրավերով սահմանված՝ գնման առարկայի տեխնիկական բնութագրին:

**Հիմք ընդունելով 2.1 և 3.1 կետերը գնահատող հանձնաժողովը որոշեց.**

1. ՔԵՆԴԼ-ԳՀԱՊՁԲ-18/15 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցներ «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին և «Մաքս Օիլ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակիցներ:
2. Հաստատել և գնումների էլեկտրոնային տեղեկագրում հրապարակել <u>պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և ընտրված մասնակիցների իրական շահառուների մասին տվյալները</u>:
3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն սույն ընթացակարգի հետ կապված անգործության ժամկետը 5 օրացուցային օր է:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**4. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին**

4.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 29-րդ կետը՝ պայմանագիրը կնքելուն հաջորդող օրը Գնահատող հանձնաժողովը համարվում է լուծարված:

Մասնակցում էին՝

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | _____ | Մ. Գյուլումյան |
| Գնահատող անդամ | _____ | Վլ. Դեխտյարով |
| Բացող անդամներ | _____ | Ա. Վարդանյան |
| | _____ | Ա. Պետրոսյան |
| Հանձնաժողովի քարտուղար | _____ | Ա. Բաղրամյան |